բեմ հացնել ուր հարկաւորն է, այլ և նուիրատուների անունները ու ազգանունները տպագրել ձեր պատուական լրագրի մէջ.

Տիրուհի Ջաւահիր Ատովմանց 2 ր., Թագուհի Ատովմանց 2 ր., Օվսանա Ատովմանց 2 ր., Նունիա Նունուսեանց 3 ր., Մարիամ Մելքոնեանց 5 ր., Սալոմէ Յարութիւնեանց 5 ր., Սոփիայ Յարութիւնեանց 5 ր., Վարդուհի Մելքոնեանց 2 ր., Թագուհի Յարութիւնեանց 2 ր., Գայիանէ Ստեփանեանց 1 ր., Զմրուխտ Ունանեանց 2 ր., Соколуова 3 ր., Սալոմէ Գալանթարեանց 1 ր., Սոֆիա Խանազեանց 1 ր., Վարդուհի Միրզեանց 1 ր., Մարիամ Աւետեանց 2 ր., Եղիսաբէթ Յարութիւնեանց 3 ր., Աշմազ Ունանեանց 2 ր., Եւա Շահնազարեանց 1 ր., Անուշկա Սահակեանց 1 ր., Եւա Սահակեանց 1 ր., Զուարթուխտ Գալեանց 1 ր., Օվսանա Փարեմուզեանց 1 ր., Մարիամ Տէր-Ղազարեանց 1 ր. 50 կ., Топчіева 1 ր., Տասօ Տէր-Մկրտչեանց 1 ր., Սոնա Տէր-Բարդուղիմէոսեանց 1 ր., Սոփիա Մարտիրոսեանց 1 ր., № № 2 ր., Թագուհի Տէր-Դաւթեանց 50 կ., Վարդուհի Զոհրաբեանց 1 ր., Հռիփսիմէ Զոհրաբեանց 1 ր., Կատարինէ Գալստեանց 1 ր., Կատարինէ Թադէոսեան 1 ր., Ն. Զոհրաբեանց 5 ր., Թագուհի Մովսէսեանց 50 կ., Նազլու Մակարեանց 40 կ., Մարիամ Աւագեանց 40 կ., Գայիանէ Մանուկեանց 20 կ., Սոֆիա Աւետեանց 20 կ., Սուլթան Սահակեանց 30 կ. Գումարն է 68 ռուբլ.

Նունիա Նունուսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ախալցխա 25 փետրվարի

Ախալցխայի «Նոր-Արշալոյս» օրիորդական ծխական ուսումնարանի վարժուհիքս և աշակերտուհիքս, մանակցութեամբ մեր բարեկամների, հանգանակեցինք յոգուտ սովելոց Վանայ, որոնց մասին քանիցս պատահել է կարդալ ձեր պատուական օրաթերթի մէջ. Ավելորդ չը լինէր լիլել և տիկին Հեղինէ Սիրունեանի պատուական անունը, որը հանգանակութեան ժամանակ նուիրեց իր ճակատի զարդից մի ոսկի.

Խոնարհաբար խնդրում ենք ձեզանից նամակումս ծրարված 18 ռուբլի ուղարկել մերազնէից կարօտելոց, ուր հարկն է և բարեհաճել տեղ տալ ձեր օրաթերթում նուիրատուաց ազգանունները դուրս բերելու, որք են.

Տիկին Մարիամ Բաղդասարեան 1 ռուբլ, տ. Հեղինէ Սիրունեան մի ոսկի մէկ ռուբլի արժողութեամբ. Տ. Շողակաթ Մարուքեան 35 կոպ., տ. Սոֆիա Շիրինեան 27 կ. տ.. Խաչուհի Մարուքեան 20 կ., տ. Փեփրոնէ Աղապպեան 5 կ., տ. Եղիսաբէթ Պապայեան 2 կ. տ. Սրբուհի Վարդեվանեան 10 կ., տ. Հռիփսիմէ Յարութիւնեան 2 կ., տ. Տիրուհի Բաբիկեան 5 կ., տ. Շողակաթ Սարգսեան 6 կ., տ. Հռիփսիմէ Սիմոնեան 5 կ., տ. Շողակաթ Անոսեան 18 կ., տ. Թագուհի Ալանեան 1 ր., տ. Նազելի Սարգսեան 7 կ., տ. Հռիփսիմէ Նազարեթեան 2 կ., տ. Զանազան Մարուքեան 20 կ., տ. Մարիամ Գիւրջեան 40 կ., տ. Հայկանուշ Թոփճեան 5 կ., տ. Շողակաթ Մեհրթաճեան 5 կ., տ. Սրբուհի Ժախեան 2 կ., տ. Վերոնիքա Մասճեան 5 կ., տ. Գայանէ Խանզուլեան 7 կ., տ. Շողակաթ Ղամիպապեան 5 կ., տ. Փեփրոնէ Ճաչեան 5 կ., տ. Անոնա Նազարեթեան 5 կ., տ. Գայանէ Խանամիրեան 3 կ., տ. Երմոնէ Ժամկոցեան 5 կ., տ. Աղանանա Կիրակոսեան 50 կ., տ. Շողակաթ Գիւրոեան 40 կ., տ. Վարդուհի Մեհրթաճեան 20 կ., տ. Երանուհի Մեհրթաճեան 20 կ., տ. Թագուհի Պապայեան 20 կ., օր. Երանուհի Աղաջանեան 25 կ., տ. Խաչուհի Աղաջանեան 20 կ., տ. Մարիամ Ղևենեան 20 կ., տ. Փեփրոնեայ Ղանավուզեան 20 կ., տ. Հռիփսիմէ Յովհաննէսեան 20 կ., տ. Տիրուհի Յակոբեան 20 կ., տ. Եղիսաբէթ Մատթէոսեան 15 կ., տ. Հռիփսիմէ Խաչատուրեան 10 կ.. տ. Մարիամ Յակոբեան 10 կ., տ. Գայանէ Ղանավուզեան 10 կ., Մարիամ Ղանավուզեան 10 կ., տ. Սոֆիա Ջրամեան 5 կ., Սոֆիա Մեհրթաճեան 5 կ., տ. Հռիփսիմէ Գրիգորեան 3 կ., տ. Շողակաթ Գիւրջեան 40 կ., տ. Աննա Պապոյեան 10 կ., օրիորդ Երմոնէ Աղաջանեան 1 ր., Հռիփսիմէ Շեկոյեան 1 ր., օր. Հայկանուշ Սիրունեան 10 կ., օր Հայկանուշ Մանուկեան 5 կ., օր. Շուշանիկ Ամարեան 2 կ., օր Կատարինէ Սառաֆեան 20 կ., օր. Հայկանուշ Ալանեան 10 կ., օր. Սրբուհի Յովհաննէսեան 10 կ., օր. Երմոնէ Աղապպեան 5 կ., օր. Եպրակսիա Մովսէսեան 5 կ., օր. Մարիամ Մովսէսեան 2 կ., օր. Կատարինէ Շաքարեան 15 կ., օր. Մարիամ Տէր-Յակոբեան 10 կ., օր. Մարիամ Շէխոյեան 6 կ., օր. Շուշանիկ Թուչկեան 10 կ., օր. Աննա Շէխոյեան 15 կ., օր. Տիրուհի Սիրունեան 40 կ., օր. Մարիամ Ինճիկեան 15 կ., օր. Աչխէն Մատթէոսեան 10 կ., օր. Մարիամ Սահակեան 10 կ., օր. Շողակաթ Մեհրթաճեան 10 կ., օր. Վարդուհի Թուչիկեան 10 կ., օր Շողակաթ Պապոյեան 5 կ., օր. Սօֆիա Սիրսեան 10 կ., օր. Լիկտարինէ Սիրսեան 10 կ., օր. Եղիսաբէթ Առաքելեան 10 կ., օր. Մարիամ Պոլոյեան 20 կ., օր. Երմոնէ Պետրոսեան 20 կ., օր. Զանազան Յովսէփեան 10 կ., օր Հռիփսիմէ Մուրթաֆեան 10 կ., օրիորդ Շուշանիկ Յովհաննէսեան 5 կ., օր. Մարիամ Խրիզեան 15 կ., օր Փառանձեմ Մէհէնճեան 40 կ., օր Արէքսազան Վարդանեան 5 կ., օր. Զանազան Պետրոսեան 5 կ., օր. Վերոնիքա Զիմմանեան 5 կ., օր. Սոֆիա Սազաթելեան 20 կ., օր. Եղիսաբէթ Գրոսեան 20 կ., օր. Սաթենիկ Վարդանեան 25 կ., օր. Հռիփսիմէ Զանոյեան 20 կ., օր. Սոփիա Ոսկերճեան 35 կ., օր. Մարիամ Յարութիւնեան 30 կ., օր. Սոֆիա Մուրթաֆեան 10 կ. օր., Գայանէ Արբրահամեան 10 կ., օր. Վերոնիքա Զահուանճեան 10 կ., օր. Եղիսաբէթ Ճիվալակեան 10 կ., օր. Շուշանիկ Կարապետեան 15 կ., օր. Եղիսաբէթ Պօչոյեան 50 կ., օր. Վերոնիքա Ղանթարճեան 4 կ., պարոն Յարութիւն Ելթէկեան 5 կ., պ. Պօղոս Յովհաննէսեան 2 կ., պ. Սարգիս Ղևինեան 20 կ., պ. Սարգիս Յունանեան 5 կ., պ. Առաքել Առաքելեան 10 կ., պ. Գրիգորեան Ղազարեան 15 կ.

Հանգանակող վարժուհիք՝ Շուշանիկ Տէր-Եղիայեան, Երմոնէ Աղաջանեան.

Հանգանակող աշակերտուհիք՝ Շուշանիկ Սիրունեան, Մարիամ Յարութիւնեան, Մարիամ Շեխոյեան.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վերջին անգամ ուղարկեցինք յոգուտ Վանի սովեալների 1000 ռուբլ. Մնում էր խմբագրութեան մէջ 82 ր. 64 կոպէկ. Դրանից յետոյ հաւաքվեցաւ դարձեալ 1323 ր. 12 կ.. Ուրեմն ընդամենը հաւաքվեցաւ 1405 ր. 76 կ.. Այդ փողից մարտի 3-ին փոխադրեցինք հեռագրով Կ. Պոլիս Կիլլէկեանի անունով 800 ռուբլ. Այդպիսով, անցեալ 4200 ր. գումարի հետ, մինչև այսօր ուղարկեցինք յոգուտ Վանի սովատանջների 5000 ռուբլ. Ուրեմն մնում է խմբագրութեան մէջ, հանելով 3 ր. 25 կ. հեռագրի ծախս, ընդամենը 602 ր. 51 կ..

—

Ստացանք պ. Միքայէլ Եսայեանցի ձեռքով Երևանցի պ. Արտեմ Պապիկովի յոգուտ Վանի սովեալների նուիրված 25 ռուբլ.

—

ԹԻՖԼԻՍՈՒՄ բնակվող Արտէլերիայի պօրուչիկ Նիկ. Դօլուխանեանը մարտի 2-ին իր ծննդեան տօնը կատարելու փոխանակ ընծայեց յոգուտ Վանի սովեալների 10 ր., որ և ուղարկեց մեր խմբագրութեանը. Նմանապէս պ. Ա. Վարդապետեանի ձեռքով ստացանք յոգուտ Վանի սովեալների ուրիշներից հաւաքած 2 ռուբլ.

—

Մեզ գրում են ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԹԻՑ, որ այդ քաղաքում ալիւրի պուդը, որ առաջ ծախվում էր 50 կոպէկով, այժմ արժէ 2 ր. 60 կ., և բարձր թանգութեանը առաջն առնելու նպատակով տեղական գաւառապետի դրդմամբ հաւաքվեցաւ 470 պուդ ցորեն և բաժանվեցաւ չքաւոր ընտանիքներին ձրիապէս. Հացատէրերին առաջարկվեցաւ առաջվանից պակաս գներով ծախել ալիւրը. Բացի սրանից գաւառապետի խորհրդով ժողովուրդը 3000 ր. հանգանակութեամբ հաւաքեց և այդ գումարով պէտք է Թիֆլիսից ալիւր բերել տայ. Ուրիշ կողմից մխիթարական է որ միսը Նոր-Բայազէթում թանգ չէ, ինչպէս հաղորդում է թղթակիցը. Մսի ֆունտը ծախվում է 6—7 կոպէկով.

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԹԻՑ մեզ հաղորդում են որ այնտեղ «Մշակի» յոգուտների, մանաւանդ մեր աշխատակից Գրիգոր Նիկողոսեանի յոգուտների ազդեցութեան տակ, սկսել են հանգանակութիւն ժողովել յոգուտ Վանի սովատանջների.

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ որ այդ քաղաքը մեծ առաջադիմութիւն է անում. Վերջին ժամանակները Ախալքալաքում հիմնվել է հասարակական բանկ, քաղաքում անցկացնելու են ջրանցք, շինելու են մի հասարակական պարտէզ. Նոյնպէս վճռեցին քաղաքային արկղից 10,000 ռուբլ տալ պրոգիմնազիա հիմնելու համար, որի համար հրաւիրեցին արդէն մի տեսուչ և ուսուցիչներ, վերջապէս հիմնվեցան երկու ընթերցարաններ, մինը կանանց, իսկ միւսը մարդկանց համար.

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Ուրախալի երևոյթ է մեզ մօտ կանանց ընթերցարանի հիմնվելը. Գիրաբ զարմանալի երևոյթ. հասարակութեան այն մասը, որ ամրողջ իր կեանքը անց է կացրել տնային փակ կեանքի մէջ, ոչ մի հասարակական գործունէութեան մէջ չէ խառնվել երբէք, բացի կերակուր պատրաստելուց և երեխաների չորերը կարկատելուց ոչնչից տեղեակ չէր, այժմ հիմնում է իր համար առանձին ընթերցարան «Կանանց ընթերցարան» անունով. Այդ ընթերցարանին նախագահում է այժմ տիկին Սրբուհի Երեցփոխեան, գրադարանապետ է տիկին Սօֆիա Ղարայլանեան, և գանձապահ օրիորդ Սօֆիա Օհանճանեանց. Հիմնադիր անդամուհիներ հինգ են այժմ, որոնք տուել են տասնական ռուբլ. Հասարակ անդամուհիների թիւը հասնում է քսանի. Թէ հանգանակութեամբ և թէ ամսավճարներով այժմ պատրաստի դրամ ունեն մօտ 140 ռուբլ. Ստորագրութիւնը դեռ չարունակվում է. Այդ մարդկանց ընթերցարանի հիմնադիր անդամները ձիրաբար ուղարկում են կանանց ընթերցարանին մի օրինակ «Մշակ», մի օրինակ «Փորձ» և մի օրինակ «Մեղու Հայաստանի». Լսում ենք որ կանանց ընթերցարանը բերել տալու է նոյնպէս ընթերցանութեան գրքեր և «Модный Свѣтъ» շաբաթաթերթը. Ցոյս ունենք որ Ախալքալաքի հասարակութիւնը բոլոր սրտից կը համակրի այդ օգտաւէտ հիմնարկութեանը.»

—

Ստացանք պ. Աւետիս Խօջամիրեանցի ձեռքով 125 ռուբլ յոգուտ Վանի սովատանջների, որ հաւաքված է եղել Օդէսա քաղաքի հայ հասարակութեան մէջ.

—

Երկուշաբթի օր, մարտի 3-ին սկսվեցաւ ԹԻՖԼԻՍԻ նահանգական դատարանի մէջ կեղծ թղթադրամ շինողների դէմ դատը. Գործի ընդարձակութեան, մեղադրվածների և վկաների բազմութեան պատճառով նահանգական դատարանի նիստերը լինում են Թիֆլիսի գինուորական նահանգական դատարանի դահլիճում. Մեղադրվածների մեծ մասը հայեր են, բայց կան և վրացիներ և օտարազգիներ. Նրանք հասարակութեան ամէն դասակարգերից են՝ վաճառականներ, պաշտօնեաներ, գինուորականներ, կայ վերջապէս և մի հայ աբեղայ Ս. Էջմիածնի վանքից. Վկաները 120 հոգուց աւելի են. Մարտի 3-ին դատարանը երդվել տուեց վկաներին, հարցրեց նրանց և կարդացվեցաւ մեղադրական ակտը. Դահլիճը լի էր հասարակութեամբ. Հանդիսականների մէջ երևում էին մեղադրվածների ազգականներն ու ազգականուհիները. Մեղադրվածներից ոմանք բոլորովին երիտասարդ մարդիկ են.

—

Մարտի 1-ին, շաբաթ օր ձեռնածու Կոզլով տուեց Արծրունու թատրոնում իր երկրորդ ներկայացումն. Կոզլով զարմացրեց հասարակութիւնը իր ճարպիկութեամբ. Ամենքը հաւանեցին մանաւանդ ինչպէս նա մի գլխարկից հանում էր բազմաթիւ գոնզգոն արկղիկներ, գնտակներ և այն զարմանալի ճարպիկութիւնը, ինչպէս նա ուտում էր վառած բամբակ և բոցեր էր թափում բերանից. Լսում ենք որ կիրակի, մարտի 9-ին Կոզլով կրկին տալու է մի ներկայացումն Արծրունու թատրոնում.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԲԻԱ

—

Երուսաղէմէն գրուած վստահութեան արժանի գրութենէ մը հետևեալ տեղեկութիւնները կը քաղեմք.

«Երուսաղէմայ Գաղղիոյ հիւպատոսին Ս. Աթոռոյս դէմ ունեցած տուլութիւնն այս անգամ պատահած ցաւալի իրողութեամբ մ'ալ հաստատուեցաւ:

Յունական հիւպատոսարանի թարգման Պետրոս Ռօք՝ միշեալ հիւպատոսին հետ տեսակցելէ յետոյ՝ վանուց միաբանութեան անդամներէն անցեալ տարի Լատինականութեան դարձող Աթանաս անուն վարդապետն ալ հետն առած ուղղակի Յոպպէ գնաց, ուր հիւպատոսարանի և Լատինաց վանուց պահապաններու և Հռովմէական խուռն բազմութեան և տեղացի Արաբ նաւավարաց գլուխն անցնելով և Աթանասն ալ միասին՝ կը յարձակին Ս. Վանուց կալուածոցը վրա, և բաց խանութներուն վարձակալները գանակոծելէ և գոց խանութները բանի բանալէ ետև, վարձակալներն յանուն Գաղղիոյ հիւպատոսին սպառնալեօք վախցնելով և ոմանց գոյքը աւարի տալով՝ բոլոր կրպակներու բանալիները կը փոխէ և Ս. Աթոռին կալուածագրերը ջնջելով՝ յանուն Աթանասի նոր կալուածագրեր կուտայ վարձակալաց:

Երուսաղէմայ Ս. Պատրիարքն այս պժգալի և անլուր իրողութեան վրայ տեղական կառավարութեան բողոքելով՝ քննութիւն և դատաստան կը լինի, և Հայոց իրաւունքն ըստ արդարութեան առ ազգն կը դառնայ:

Գաղղիոյ հիւպատոսն իւր մասնակցութիւնը թէպէտ կուրանայ, բայց սոյն իրողութեան վրայ իւր զգացումը չծածկելով՝ կըսէ թէ այսպիսի դէպքեր պէտք է տեղի ունենան, որպէս զի Գաղղիոյ ազդեցութիւնը ճանչուի:»

Ինչ գեղեցիկ միջոց՝ Գաղղիոյ պէս քաղաքակրթեալ մեծ ազգի մ'ազդեցութիւնը ճանաչցնելու:

(Մասիս)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի: Ներքին երկրորդ փոխառութեան տոմսակներից, որոնք խաղացվեցան մարտի 3-ին, տարան հետևեալ համարները.

№ № սերի.	№ № տոմսակի	տարած գումար ռուբլի.
7,938	39	200,000
4,538	40	75,000
11,124	19	50,000
11,575	5	25,000
19,152	50	
1,374	48	10,000
18,295	23	
16,071	28	
10,058	13	
19,942	7	
7,938	39	
4,538	40	8,000
11,124	19	
11,575	5	
19,152	50	
1,374	48	
18,295	23	
16,071	28	
10,058	13	
19,942	7	5,000
2,683	27	
15,704	41	
19,838	42	
370	13	
11,056	21	
7,569	6	
1,822	1	
3,447	11	
8,530	28	
5,353	46	
16,896	23	
9,555	33	
15,373	19	
10,061	9	
19,399	2	
7,815	4	1,000
15,785	37	
11,367	33	
12,446	47	
11,059	43	
4,154	39	
9,769	28	
17,371	18	
17,600	48	
10,306	9	
8,861	41	
11,958	15	
6,684	8	